ցաւ ընտրութիւնների մէջ, նրան իսկոյն հրաժարեցրին պալատական քարոզչի պաշտօնից, որ նա այդքան տարի շարունակ վարում էր։

Ուրիշ կողմից Էլզաս-Լօթարինգիա նահանգը, որ Ֆրանսիայից կտրելով միացրեցաւ Գերմանիայի հետ վերջին Ֆրանս-գերմանական պատերազմից յետոյ, ընտրեց մեծ մասամբ բողոքի կուսակցութեան պատգամաւորներին, այսինքն այն կուսակցութեան, որ բողոքում է Էլզաս-Լօթարինգիայի Գերմանիայի հետ միացնելու դէմ։ Այդ անյաջողութեան մէջ դարձեալ ինքն գերմանական կառավարութիւնն է մեղաւոր, ինչպէս շատ ուղիղ նկատեց ռուս „Գօլօս" լրագիրը։ Գերմանական կառավարութիւնը ամեն բան արաւ, որ յարուցանի իր դէմ խուլ անբաւականութիւն յիշեալ նոր նուաճած նահանգների մէջ։ փոխանակ այդ նահանգներին կառավարչական և ազգային ինքնավարութիւն տալու, գերմանական կառավարութիւնը բռնի կերպով մտցնում էր Էլզասի և Լօթարինգիայի դպրոցների մէջ գերմանական լեզուն, գաղթեցնում էր այդ նահանգներից բնիկ երկրագործ ազգաբնակութիւնը և բռնի կերպով բնակեցնում էր նրանց հողերի վրա գերմանական երկրագործներին և այլն։ Եւ ահա նոր նուաճած երկիրների ժողովուրդը, որ դեռ մոռացած չէր այն ազատութիւնները, որ վայելում էր Ֆրանսիայի տիրապետութեան ժամանակ, բողոքեց գերմանացիների բռնաւորութեան դէմ, ուղարկելով պարլամենտ բողոքի, այսինքն Ֆրանսիային կուսակից պատգամաւորներին։

Այդ միջոցներով, ասում է „Գօլօս" լրագիրը, չէ կարելի իրան բարեկամացնել մի հպատակ ազգութիւն, այլ նրա համակրութիւնը կարելի է գրաւել միմիայն տալով նրան ներքին ինքնավարութիւն։

Լրագիրները հաղորդում են, որ գերմանական յետադէմ թերթերը, որոնք անչափ ինքնավստահ և յանդուգն էին ընտրութիւններից առաջ, այժմ, երբ ընտրութիւնների մէջ յաղթուեցան, սկսում են աւելի մեղմ կերպով խօսել, այլ և այնքան յանդուգն չեն և արդէն յոյս չունեն իրանց կողմը դարձնել կղերական կենտրոնը և անհնարին համարելով, ի հարկէ, հաշտուել ծայրայեղ պրօգրէսիստների հետ, որոնց պարագլուխներն են Բիսմարկի երդուեալ թշնամիները, ինչպէս Վիրխօվ, Րիխտէր, Լէօվէ, և ազատամիտներից անջատուածները, ինչպէս օրինակ Լասկէր, սկսում են այժմ փոքր առ փոքր շողոքորթել չափաւոր ազատամիտներին, որոնք մի ժամանակ իշխան Բիսմարկի կուսակցութիւն էին կազմում, մինչև որ նա ինքն ազատամիտ էր։ Բայց հէնց որ նա յետադէմ դարձաւ, այդ կուսակցութիւնը նրանից բաժանուեց։ Շատերը հիմա հետաքրքրւում են այն հարցով թէ չափաւոր ազատամիտները մի՞թէ նորից կընկնեն յետադէմ կուսակցութեան ձեռքով նրանց համար լարած որոգայթների մէջ։

Մի և նոյն ժամանակ կղերական կուսակցութիւնը յայտնում է իր օրգան «Գերմանիա» լրագրի մէջ, որ երբէք չի հաշտուի իշխան Բիսմարկի հետ և կղերականները այժմ լինելու պարլամենտական [illegible]թիւնների մէջ, որտեղ մրցելու են պրօգրէսիստները, սօցիալիստները և պահպանողականները, խորհուրդ են տալիս իրանց ընտրողներին, որովհետև կղերական կանդիդատ չունեն այդ [illegible]թիւնների մէջ, ձայն տալ պրօգրէսիստների կամ սօցիալիստների համար, և երբէք ձայն չը տալ պահպանողականների, կամ կառավարութեան կանդիդատների համար։

Այդ անխուսափելի դրութիւնը իշխան Բիսմարկը շատ լաւ հասկացաւ այժմ և, ինչպէս երեւում է, յետադէմ լրագիրներին հրամայուած է այժմ նորից շողոքորթել չափաւոր ազատամիտներին, քանի որ ծայրայեղ ընդդիմադրութեան, պրօգրէսիստների և սօցիալիստների ներկայացուցիչները երբէք հաշտուելու չեն Բիսմարկի քաղաքականութեան հետ։ Զարմանալի է որ վերջին ընտրութիւնների ժամանակ սօցիալ-դէմօկրատական կուսակցութեան ընտրողների թիւը նշանաւոր կերպով աւելացաւ, չը նայելով որ այդ կուսակցութեան դէմ յայտնուած են բացառական օրէնքները, որ սօցիալ-դէմօկրատներին պաշտպանող բոլոր լրագիրները արգելուեցան, որ այդ կուսակցութեան անդամներին չէ թոյլ տրւում հաւաքուել, ժողովներ կազմել, որ նրանցից ամենանշանաւորները աքսորուած են։

ՆԱՄԱԿ ԹՈՒՐՔԻԱՅԻՑ

Կ. Պօլիս, 15 Նոյեմբերի

Այնչափ շատ նիւթ ունիմ գրելու, որ չը գիտեմ ինչով սկսել. մի այցելութիւն Գում-Գափուի մայր վարժարան. մի [illegible] պ. Մինաս Ջերազի, իր եղբօր և մի խմբագրի ընկերակցութեամբ հա-մալների բնակված ուսերովները. պատրիարքի անուան օրը ամսիս 11-ին և պատրիարքի մօտ եկած պաշտօնական հիւրերի շուքը ու նոցա ունեցած խօսակցութիւնները. պ. Ջերազի այցելութիւնը Ամերիկայի դեսպանին ու նրա հետ ունեցած հետաքրքիր խօսակցութիւնը հայոց մասին. «Journal d'Orient»-ի գրած տխրալի նամակը պ. Ջերազին Կ. Պօլսի հայերի մահաբեր անտարբերութեան մասին դէպի հայոց այդ նորահաստատ օրգանը. Կամարակապից իմ առացած մի շարք հետաքրքիր նամակները Հայաստանից. վերջապէս իմ երէկվայ այցելութիւնը պատրիարքին իր ամառական տանը Խասքէօյի մէջ—այս ամենը այնչափ նիւթեր են, որ ոչ մի նամակով սպառելու են և ոչ մի քանի։ Բայց սկսենք վերջից, որովհետև պատրիարքի հետ ունեցած տեսակցութիւնս աւելի հետաքրքրական եմ կարծում ձեր ընթերցողների համար։

Ինչպէս վրդովուած մի խիստ տխուր անցքով, որ պատահեց Կ. Պօլսի հայ ընտանիքներից մէկի մէջ, չը կարողացայ տրամադրութիւն ունենալ ամսիս 11-ին գնալ պատրիարքարան պաշտօնական այցելութեամբ, վասնորոյ որոշեցի մի երկու օր յետոյ առանձնապէս տեսնուել պատրիարքի հետ միայնութեան մէջ իր ամառական տանը։

Երբէք չէի պատահած Ներսէսին մի այսպիսի տրամադրութեան մէջ. մի կողմից նա երեւում էր ծանր մտահոգութեան մէջ, միւս կողմից էլ շատ փափագով խօսակցելու համար. առհասարակ Ներսէսը քիչ մելամաղձոտ բնաւորութիւն ունի, որով առաջին անգամ առաջի տեսնողի վրա գուցէ բաւարարիչ տպաւորութիւն չը գործէ։ Նորան շատ մօտից և վաղուց ճանաչողները ասում են, որ ընդհանրապէս հազիւ է պատահում նորա մէջ փափագ տեսնել կէս կամ մի ժամ մէկի հետ հանգիստ խօսելու համար. վասնորոյ որչափ գոհ պիտի լինէի, երբ մեր բարեւ առնելու ժամանակ նայեցի ժամացոյցին և տեսայ, որ արդէն 2½ ժամ եմ նստել, որը սակայն բոլորովին նկատելի չեղաւ։ Նիւթերը փոփոխւում էին շատ արագ. որոնցից իւրաքանչիւրի վրա պատրիարքի լսած դատողութիւնները հիացնում էին ինձ թէ որչափ իմաստի և հեռատեսութեան կողմից, այնչափ էլ պարզութեան և համեստութեան։ Առաջին անգամն էր տեսնում կեանքիս մէջ մի հայ մարդ, որը նոյնչափ բարձր էր իր դրութեամբ, որչափ համեստ, նոյնչափ վսեմ էր և մեծ իր քննադատութեանց մէջ, որչափ ներողամիտ և համեստ։ Պատրիարքի յայտնած ամեն մի կարծիքը լսում էի կրկնապատկված ուշադրութեամբ, ինչպէս մի [illegible] խօսքեր, որոնցից իւրաքանչիւրը խորը դրօշմվելով մտքի մէջ պիտի դառնան մի մի պատգամ լուռ ամբողջ կեանքի համար։ Գիտեմ, որ շատ պիտի հետաքրքրէին ձեր ընթերցողները այս ամենի վրա, բայց ցաւում եմ, որ նախ' բանաւոր պատճառներով չը պիտի կարողանամ յանձնառու լինել նոցա հետաքրքրութեան բաւարարութիւն տալու, երկրորդ' դորա կատարելու համար հարկաւոր է գոնէ քսան թերթանոց նամակ գրել, որ ոչ ձեզ համար է յարմար և ոչ ինձ համար։

Չը նայելով այս ամենին սակայն պարտաւորութիւն եմ համարում ասել ձեզ ինչ միայն կարելի է հայոց հարցի վերաբերմամբ։ Պատրիարքի յայտնած միտքը մօտաւորապէս հետեւեալն էր կայանում. հայոց հարցը այնչափ մեծագործականութիւն է գտած Եւրոպայի մէջ և այնչափ հասունացած կարծիքների առաջ, որ նորա խափանուելը և մոռացուելը անհնարին է, բայց խնդիրը միայն նորա մէջն է, որ մի կողմից Թիւրքիան տրամադրութիւն չունենայ խոստացածը գնել այդ խնդիրը շուտով և հեշտութեամբ կարգադրելու համար, միւս կողմից Եւրոպան կարող լինի Անգլիայի հետ համակերպուել նոյն եռանդով և նոյն հաստատամտութեամբ հայոց դատը առաջ քշելու։ «Ահա այս երկուքն է հարկաւոր մեզ» ասեց պատրիարքը ու սկսեց իր կարծիքները յայտնել այդ երկու պայմանները դիւրացնելու համար։ «Չը կարծէք որ Թիւրքիան չէ զգում իր վտանգաւոր ներքին կացութիւնը, ասեց պատրիարքը, չը կարծէք որ նա չը գիտէ թէ որչափ առիթազական է բաւական Փոքր-Ասիայի ոչ միայն քրիստոնեայ տարրի վիճակը, այլ և մահմեդական հպատակներին էլ, բայց ցաւակցութեամբ պէտք է ասեմ, որ Թիւրքիան այդչափ չարաչար սուտելով Եւրոպային իր առաջվայ հպատակների ձգտումներից, հայոց ձգտումների վրա էլ նա նայում է ինչպէս բուլղարների և սերբերի ունեցած միտումներին, վասնորոյ կրկին անգամ «քրիստոնէից վիճակի բարւոքման» խնդրին նա երեսակայում է իրան նոյնը մօտաւոր ապագայում, ինչ եղան սերբերը և բուլղարները, մինչդեռ յայտնի է որ ոչ մի հայի մտքով չէ անցնում այնպէս ուրիշ բան, բացի վայելել քաղաքական և հասարակային կացութիւն ընդ հպատակութեամբ և կենակցութեամբ Թիւրքիայի։—Բայց մինչ Թիւրքիան չը գիտէ, որ կործանելով հայերին, նա կործանում է և իրան, որովհետև երբ ջնջվեց Հայաստանը իր երկու միլլիոն քրիստոնեայ ժողովրդով, այդ օրից վերջ կարելի է համարել Թիւրքիայի գոյութեան։—Ե՛ւ, ներէք ու հասկցրէք սոցա» ասաց պատրիարքը։

—Բայց ինչ ելք կայ, սրբազան, Թիւրքիայի կառավարութիւնը վստահացնելու ու գիտումներին համաձայնեցնելու.—«իմ կարծիքով միակ մի ելք», ասաց պատրիարքը չնչելով. «հարկաւոր է, որ ես հրաժարական տամ»—«Հրաժարական, բացականչեցի. ինչպէս կարելի է, առանց ձեզ մինչ բան կարող է լինել»—«Այո, կը լինի ասաց նա, որովհետև ինչպէս վերը յայտնեցի, հայոց հարցը արդէն չէ կարող խափանուիլ ով որ լինի իմ պաշտօնիս անցնող պատրիարքը, մինչդեռ իմ հրաժարականովս այն կարող է յառաջանալ, որ Թիւրքիան իմ յաջորդիս գուցէ աւելի վստահութիւն կունենայ, քան թէ Ներսէսին, որը նորա աչքում մի խռովարար է դառած, իսկ միւս կողմից հիւանդութեանս պատճառաւ ես կերթամ Եւրոպա ....»

Այսպիսով բոլորովին պարզվեց պատրիարքի համոզմունքը հայոց հարցի լուծումը փութացնելու համար. նորա վրա ունեցած համարումը Եւրոպայի մէջ այնչափ մեծ է, որ Ներսէսի Եւրոպա ճանապարհորդելը յիրաւի կարող է բոլորովին ցնցել հասարակաց կարծիքը և մեծ զարկ տալ և վերջնական լուծում տալ հայոց հարցին։ Պատրիարքի Եւրոպա գնալու բանը պարտաւոր թէպէտ պիտի լինի, ինչպէս իսկապէս էլ է, նորա մտքից և օրից որ աւելի ծանրանում հիւանդութիւնը, վասնորոյ Թիւրքիան մնալ է, որ այնչափ առելի չի ունենայ նորա ցանկութեան դէմ, երբ այս ցանկութիւնը կարտայայտէ մի մարդ, որի մի ոտը ամեն վայրկեան գերեզմանի շեմքի առաջ է։—«Գիտցէք թէ ձեզ յաջորդ վեց հրաժարական տալ Եւրոպա գնալու համար, նկատեցի, բայց գիտէք որ հայոց պատրիարքը Եւրոպա չը ջնէս պիտի չըլլէ ոչ ինչպէս որ և է մի եպիսկոպոս, այլ ինչպէս իշխան, որովհետև ամ Ասիա չէ, որ գիշխնութեամբ մարդ հալա գնայ, իսկ մի տեղից և մի ազգից պիտի համարի ձեզ գոնէ մի քանի առանձնական հարցեր բոլոր օգնութիւնս»—«Ո՛, այնչափ օգնելից չեմ ուզում, ասաց նա, ձեռքերով յետ քշելով հայ հարուստներից սպասելի օգնութիւնը։ Ես կը պատեմ Եւրոպա ինչպէս մուրացող ներկայացուցիչ մի թշուառ և որբնացած ազգի, ես կը շրջեմ աշխարհ ինչպէս մի Պետրոս Ամիենացի, մենամիայնակ, ինքս լինելով և իմ ապաստանը, և իմ քարոզարը և հայոց պատրիարքը» ճշմարիտ ասած, այս խօսքերը շատ յուզեցին ինձ, տեսնելով, որ պատրիարքի ասածը ուրիշ ազգերից չէր, բացի այն տխուր փորձերից, որին նա հանդիպել է հայ հարուստների մէջ հայոց հարցը երեւան գալու օրից ի վեր, որ իւրաքանչիւր դէպքում հազար ռուբլիներ է հարկաւոր եղել պատրիարքին եւրոպական խմբագիրներին, թղթակիցներին և ուրիշ հարկաւոր մարդիկներին շահելու համար, բայց պատրիարքը կարողացել է առաջարկել նոցա միայն մի բաժակ սուրճ իր սրտագին աղերսի և ջերմ աղօթքի հետ։ Ահա այսպէսով է ստիպել հայոց հարցը և հասցրել մինչև այս կէտը Կ. Պօլսի Ներսէս պատրիարքը, երբ Էջմիածնի pontifex maximus-ի իւրաքանչիւր վերջին եպիսկոպոսը հարիւր հազարներով է միշտ խաղացել իր բարի օրինակ վ.ան. Մանկունիից բարոյական խրատ առնելով…

Երբ մինչև վերջը լսեցի պատրիարքի պլանը իր հրաժարականի հետ, սկսայ հարց առաջ եկաւ թէ ով կը լինի հաջա իրան արժանի փոխարինողը։ Ներսէսը տալու երկու մարդի անուն, որոնցից մէկի վրա շատ վիճեցի. այդ երկուից առաջինից հաւանելին և առաջինը անունանց պատրիարքը Զմիւռնիայի առաջնորդ Գարեգին Մուրատեան եպիսկոպոսը։ Յայտնի է, որ նա կրթական է և շատ ճշմարիտ և անխարդախ մի հայ, թէպէտ գուցէ ոչ ռամիկ աստուածաբան և ոչ էլ եւրոպագէտ… Այս անգամ այսչափը։

Գրիգոր Նիկողոսեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Bohemia» լրագրի խօսքերով, Սերբիան թագաւորութիւն հրատարակելու խնդիրը բարեյաջող կերպով վճռվելու ճանապարհի վրա է։ Ասում են, որ իշխան Միլանին շատ տեղերից հաւատացնում են, թէ նրա թագաւորական տիտղոս ընդունելը ոչինչ արգելքների չի պատահի, այնպէս որ եթէ սերբիական ազգային ժողովը կը հետևի ռումինական ազգային ժողովին, սերբիական թագաւորական հարցը հաստատապէս կը վճռվի։

—Վիէննայից «Politik» լրագրին հեռագրում են, որ Համպէրտ թագաւորը միաժամանակ Վիէննա և Բեռլին գնալ հարցնելով, թէ արդեօք ախորժելի կը լինի իր այցելութիւնը։ Բեռլինից պատասխան տուցաւ, որ կայսրը ամեն ժամանակ ուրախ է ողջունել թագաւորին հիւրին, բայց ինքն այնքան ուժեղ չէ, որ տեսի թագաւորին տալիս այսպիսի ժամանակին այցելութեան երկար ճանապարհորդութիւն, սկսել և եթէ նա գիտում է խնդրելով մինչև գարունը յետաձգել այդ ճանապարհորդութիւնը, այդ միայն այն յաւով է, որ հետ ունենալ ողջունել Բեռլինում նոյնպէս և թագուհուն, առանց որ և է վնասի նրա առողջութեան համար։

—Լրագիրները հաղորդում են հետեւեալը. Գիտոյին մօտ ճանաչող անձինք խոր համոզված են, որ նրա խելագարութիւնը կեղծաւորութիւն է և սուտ։ Բանտում եղած բոլոր ժամանակը, մինչև այն օրը, երբ պաշտպանութեան պլանը բոլորովին վերջացած էր, նա խելագարութեան ոչ մի նշան չէր ցոյց տալիս։ Սկզբում նա ամեն բան հերքում էր, բայց այն օրից, երբ նա հարկաւոր համարեց իրան խելագար ձեւացնել, նրա բոլոր գործողութիւնները և դրութիւնները խելագարութեան նշան էին կրում։ Նա մինչև անգամ ծայրայեղութեան էր հասնում։ Բայց այժմ նա և նրա պաշտպանը կատարելապէս համոզվեցան որ այդ կեղծ ձեւերը շատ չեն օգնի։ Եւ ահա Գիտոն կրկին իր խելացի ձեւերը ընդունեց։ Նա թէ ֆիզիկապէս և թէ բարոյապէս բոլորովին առողջ է։ Նրա պաշտպանը խնդրեց ատեանի դատարանին դատաստանական քննութիւնները նոյեմբերի 1-ից մինչև նոյեմբերի 21-ը յետաձգել։ Դատարանը համաձայնեց գործը մինչև նոյեմբերի 14-ը յետաձգել։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 Նոյեմբերի։ „Новости" լրագիրը հաղորդում է, որ արդարանում է լուրը Կովկասի կառավարութեան